«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Հ.Թումանյանի քառյակների ուսուցումը ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով
ԱՌԱՐԿԱ	Գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Գեղեցիկ Ստեփանյան
ՄԱՐԶ	Կոտայքի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի N 5 հիմնական դպրոց

Բովանդակություն

1.Բովանդակություն ----------1

2.Մեթոդներ----------2

3.Ներածություն----------3

4.Հովհաննես Թումանյանի քառյակների ուսուցումը՝

տեխնոլոգիաների միջոցով---------- 5

5.Եզրակացություն----------17

6.Գրականության ցանկ----------18

Մեթոդներ

- Դասախոսություն
- Մտագրոհ
- Վենի դիագրամ
- Ասմունք
- Շրջագայություն պատկերասրահում
- Հարցերի քարտարան
- Ուսումնական նյութեր՝համակարգիչ, բջջային հեռախոսներ, գունավոր մատիտներ, A4 չափսի թղթեր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արևի տակ ուսուցչի մասնագիտությունից բարձր մասնագիտություն չկա

Յան Կոմենսկի

Կրթությունը աշակերտների կողմից գիտելքների,իմացական կարողությունների ու հմտությունների տիրապետման, աշխարհայացքի, ստեղծագործական ուժերի, ընդունակությունների զարգացման գործընթացն ու արդյունքն է:Մանկավարժը պետք է հենվի սովորողի զարգացման ոչ թե անցած, այլ վաղվա օրվա վրա: Եթե ուսուցանվող նյութը և ուսուցման մեթոդները այնպիսին են, որ սովորողի առջև խնդիր չի դրվում հաղթահարելու խոչընդոտները, ապա զարգացումը դանդաղում է: Ուսուցանվող նյութը դառնում է ավելի ընդգրկուն և խորիմաստ, եթե բացահայտվում է սովորողի կարողություններն ու հմտությունները: Ուսումնական գործընթացում ուսուցիչը գործ ունի տարբեր հետաքրքրությունների, մտածողության, խառնվածքի, հիշողության առանձնահատկություններ ունեցող սովորողների հետ: Ուսումնական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ոչ թե ուսումնական ծրագրով նախատեսված յուրացրած գիտելիքի քանակով, այլ դրա միջոցով սովորողի փորձի հարստացման, զարգացման, գործնականում կիրառելու մակարդակով: Յուրաքանչյուր սովորող պետք է հնարավորություն ունենա այնպիսի գործողություն ծավալելու, որի ընթացքում կարողանա ոչ միայն դրսևորի իր ինքնատիպությունը, այլև դրա միջոցով հիմնավոր գիտելիքներ ձեռք բերի: Գտության զարգացումը մեզ հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը : Ժամանակակից մեթոդները, ՏՀՏ-ը, տարաբնույթ խաղերը ավելի են ամրապնդում սովորած գիտելիքները: Ինտերակտիվ մոտեցումները անհրաժեշտ են սովորողներին մոտիվացնելու, ուսուցումը ավելի հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Նոր տեխնոլոգիաները յուրահատուկ կապ են ձևավորում սովորեցնողի և սովորողի միջև, շարժում են սովորողի հետաքրքրությունը ուսուցնվող նյութի հանդեպ: Նրանք հանդես են գալիս նոր առաջարկություններով, ազատ ու անկաշկանդ արտահայտվելու կարողություններ ու հմտություններ են ձեռք բերում:

Հաճախ սովորողից դառնում են սովորեցնող: ՏՀՏ-ի օգտագործումը դասապրոցեսում պետք է բարձրացնել , որպեսզի հասանելի լինի բոլոր սովորողներին:

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- Առաջարկվող հնարների միջոցով ավելացնել ուսուցիչների կողմից նյութի մատուցման հետաքրքիր ձևերը
- Ուսուցման գործընթացը դարձնել ավելի մատչելի, հետաքրքիր ,ավելի մասնակցային
- Խրախուսել աշակերտներին զարգացնել վերլուծական ու քննադատական կարողությունները
- Աջակցել սովորողներին հասկանալ սովորած թեմայի կարևորությունը, բովանդակությունը
- Խթանել պատկերավոր մտածողությունը

Հետազոտության արդյունքում կարող են լուծվել մի շարք խնդիրներ

- բացահայտել աշակերտների ստեղծագործական երևակայությունը
- բարելավել լսածի ու կարդացածի վերաբերյալ գրագետ արտահայտվելու հմտություններ
- կատարելագործել վերլուծական ու քննադատական կարողությունները
- մշակել բանավոր ու գրավոր խոսքը

Հովհաննես Թումանյանի քառյակների ուսուցումը ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով

Հեղեղի պես իջավ նա Լոռու վայրենի լեռներից՝ բերելով իր հետ մի ամբողջ բնություն՝ հուռթի ու բազմավարար,մի ամբողջ հինավուրց ժողովուրդ՝ իր տոհմիկ երգով ու խոսքով, հույզերով ու երևակայությամբ: Եվ նչպես ստեղծող բնությունը՝ փռեց նա մեր հոգու առջև իսկական, անկեղծ բանաստեղծություն:

Ավետիք Իսահակյան

Քառյակ

Ինչ է քառյակը: Քառյակը չորս տողից կազմված բանաստեղծություն է: Այն արտահայտում է ավարտուն միտք, գաղափար, պատկեր: Քառյակն ունի խոհափիլիսոփայական բովանդակություն: Լայնորեն տարածված է եղել արևելքի,հատկապես պարսկական, միջնադարյան բանաստեղծության մեջ և կոչվել է ռուբայի: Միջնադարում են ստեղծվել նաև հայկական քառյակները՝ հայրենները: Հայրենը հայտնի է նաև որպես ժողովրդական ստեղծագործություն, կոչվում են անտունի, խաղիկ: Հայրեններ գրել են միջնադարի բանաստեղծներ Ֆրիկը, Հովհաննես Երզնկացին, առավել հայտնի են Նահապետ Քուչակի հայրենները: Հայ գրողներից քառյակներ գրել են Եղշե Չարենցը, Հովհաննես Շիրազը, Խաչատուր Աբովյանը, Վահան Տերյանը և այլք:

Կյանքի վերջն շրջանում՝ 1916- 1922 թթ Թումանյանը գրեց իր նշանավոր քառյակները, ամբողջացրեց աշխարհից ստացած տպավորությունները, հասարակության և բնության մասին կուտակած խոհերը, սեփական կենսափորձը: Բանաստեղծը գրում է <<Քառյակները շատ ուժեղ շտրիխներ են, դրանք իմ հոգու կենսագրությունն են>>: Գրած յոթանասուն քառյակներում Թումանյանը բարձրացնում է բազմաբնույթ հարցեր՝ անպարփակ սեր ու կարոտ հայրենի եզերքի ու հարազատների հանդեպ, սեր դեպի բնությունն ու մարդը: Մեծ լոռեցն անհաշտ էր մեծ տերությունների վարած արյունալի քաղաքականության հետ, նրա նրբազգաց ոգին ծառանում է այդ քաղաքականությանդ դեմ, անմարդկային մի քաղաքականություն, որն այլանդակում է բնությունը, հասարակական կյանքը:

Ո՞ւր հեռանաս.կոխած տեղդ արյունոտ,

Ու՞մ մոտ գնաս .ծանոթ ընկերդ արյունոտ,

Ոնց մոռանաս էս աշխարհքը արյունոտ,

Երգ ես լսում. լսած երգդ արյունոտ:

Կամ՝

Ամեն մի սիրտ ցավով լրցվեց մեր դարում,

Ցավոտ սրրտով աշխարհ լրցվեց մեր դարում,

Ցավոտ աշխարհքն եկավ լրցվեց բովանդակ,

Իմ սիրտը բաց , իմ սիրտը մեծ մեր դարում:

Թումանյանը ամբողջ սրտով զգացել է հարազատ ժողովրդի ողբերգությունը: Չնայած բոլոր «ցավերին, նենգ ու դավին»՝ նա չի չարանում աշխարհի դեմ, քանի որ «ամենքի հետ ապրում է, ամենքի չափ տառապում»:

Գրականագետ Կարլեն Դանիելյանը գրում է. «Քառյակները լուսեղեն ու մաքուր հաց են՝ նշխարքի նման, որոնց պիտի մոտենալ-մերձենալ ոչ ամեն պահի, հատկապես լքյալ, հատկապես անորոշ այն պահերին, երբ մարդու միջից ծխի նման ելնում է հանդարտ, քիչ տարուբերվող տրտմությունը: Այդ տրտմությունը այն չէ, ինչ մենք գիտենք, այն սկսում է շարժվել ու նրբերանգներ առնել, երբ մարդն ինքն իր հետ է և առանձնության մեջ, գլխովին ներսուզված սեփական անհայտության ծովը»: [1]

Կ.Դանիելյան «Գրականության պատմության լույսը» Երևան «Սովետական գրող» 1980թ. էջ 176.

Երնեկ էսպես՝ անվերջ քեզ հետ- իմ կյանքի հետ լինեի,
Հազար երնեկ՝ դաշտում մենակ- երկրնքի հետ լինեի,
Բայց ով կըտա էն վայելքը՝ ինքըս ինձ էլ չըզգայի,
Ու հալվեի, ծավալվեի, ամենքի հետ լինեի...

Քառյակներում Մեծ հայրենասերը խոսում է իր անունից, բայց այդ ես-ը ողջ մարդկությունն է: Ըստ Թումանյանի՝ մարդու շնորհները, օժտվածությունը աստվածային սկիզբ ունեն: Այդ է պատճառը, որ մեծ մտածողը Աստծո հետ նույնանալու, նրա պես ապրելու կամ նրա նման ծավալվերու ու կենդանի շունչը մյուսներին փոխանցելու անափ կարոտը ճանապարհ է հարթում դեպի Ստեղծողին հասնելու խոր ցանկություն:

Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի,
Խափան, խոպան ու անպըտուղ, անցավ առանց արդյունքի,
Ինչքան ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսնավ էս հողին,
Ինչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տըվողին:

Թումանյանը քառյակներ սկսել է գրել 1916 թվականից: Դրա համար նա պատճառներ ուներ: Հեղինե Մելք- Հայկազյանին գրում է. «Ճշմարիտ որ՝ էս վերջին մի քանի ամիսը սոսկալի ամսներ եղան իմ կյանքում: Առաջ Վան, հետո ամառ Էջմիածին, նրանից հետո մի եղբորս սպանությունը, տունը անտեր-

ու միայն շփոթված, սգավոր կանայք ու երեխաներ, մյուս եղբայրս ֆրոնտում կամ հիվանդանոցներում, տղերքս դեն- դես ցրված ու վտանգի տակ...մի խոսքով էն վերջին տարիները գնան ու ետ չգան»:

2./Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան 1945, հ.5 էջ 410/

Անձնական ապրումների միջոցով բանաստեղծը արտահայտում է ողջ հայ ժողովրդի ապրումները:

Ու՞ր կորան...

Մոտիկներըս ո՞ւր կորան,

Ինչքան լացի, ձեն ածի՝

Ձեն չի տրվին, լուռ կորան:

Կամ՝

Ետ չեկավ...

Գընաց, գընաց ետ չեկավ,

Անդարձ կապով սև հողում

Կապվեց, մնաց, ետ չեկավ:

Մեծ լռեցին խոստովանում է.,,Շարունակ ուզեցի Լռի- մեր գյուղում մի հարմարություն ստեղծեմ, էնտեղ քաշվեմ ապրելու և պարապելու: Չեղավ: Երևի էսպես էլ գլուխ չի գալու,,: Այսպիսի լուսավոր երազանքը չիրականալու հետևանքով էլ ծնվեցին ներքոհիշյալ հայրենակարոտ քառյակները:

Լիներ հեռու մի անկյուն,

Լիներ մանկան արդար քուն,

Երազի մեջ երջանիկ

Հաշտ ու խաղաղ մարդկություն:

Կամ՝

Աշնան ամպին ու զամպին,

Մոլոր նստած իր ճրմքին,

Լռռու հանդում մի արտուտ

Սպասում է իմ ճամփին:

Թումանյանի ամեն քառյակ հյուսված է հոգու անորսալի ելևէջումներից, մանկական վառ հիշողություններից, սարերում անցկացրած մանկական վառ տպավորություններից.

Իմ սուր, արթուն ականջում

Մի խոր ձեն է միշտ հընչում,

Անհուն, անքուն կարոտով

Իրեն մոտ է ինձ կանչում:

Թումանյանը բազմակողմանի զարգացած անձնավորություն էր: Քաջատեղյակ էր արևելյանգրակ անությանը, ուսումնասիրել էր հնդկական փիլրսոփայությունը, թարգմանել էր Խաղանից վեց ռուբայի, ծանոթ էր Օմար Խայամի ստեղծագործություններին: «Մենք մեջտեղն ենք հոգևոր Արևելքի և գործնական Արևմուտքի: Արևելքը մարդը հասցրել է Աստծուն, տիեզերքին,Աթմանին խառնել...Աթմանը- դա ուրախություն է, որ խոսում է կեցության մասին, կեցության ուրախություն»: Ահա քառյակներից մեկը.

Հ.Թումանյան Երկերի ժողովածու, Երևան 1990թ. Հատոր 10

Արևելքի եդեմներին իջավ պայծառ իրիկուն,

Հեքիաթական պալատներում ըսպասում են իմ հոգուն,

Ինչ եմ շինում էս ցեխերում , աղմուկի մեջ վայրենի...

Ախ թե նորից զըտնեմ ճամփան՝ դեպի էնտեղ, դեպի տուն:

Պետք է նշել, որ այս քառյակը գրված է Դսեղում՝ Թումանյանի տուն- թանգարանի բակում տեղադրված մահարձանի վրա, որի տակ սմփոփված է Ամենայն հայոց բանաստեղծի տառապած սիրտը:Արևելքը քաղաքակիրթ մարդկության հիշողությունն է, հին քաղաքակրթության արձագանքը: Ըստ Թումանյանի՝ «Արևելքը հանելուկ է, խորհուրդ, թանձր մտածում, ազատության օրրան, Մեծ ոգու թագավորություն»:

/Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան 1959թ, հ.6 էջ 249/

Խայամն ասավ իր սիրուհուն. ,,Ոտքդ զգույշ դիր հողին,

Ով իմանա՝ որ սրունի բիբն եց կոխում դու հիմի...,,

Հեյ, ջան, մենք էլ զգույշ անցնենք, ով իմանա թե հիմի

Էն սիրունի բի՞բն ենք կոխում, թե հուր լեզուն Խայամի:

Բանաստեղծը փորձում էր իր « համոզմունքներին ու հավատին» ճամփա բանալ դեպի հին ու նոր աշխարհների սահմանները, հասնել աննյութական ու պարզ երջանկության ակունքներին:

Թումանյանը գրում է. «Կյանքը իր ամբողջության մեջ՝ մեծ է, շատ է մեծ: Կյանքը -տիեզերական կյանքէ, և մարդու կյանքի ամբողջ վեհությունն ու քաղցրությունն էլ հենց էն է, որ իր շրջապատի միջոցով ապրի էն մեծ կյանքով..., բայց մարդը ապրում է նրա մի մասով- մարդկային կյանքով ...Սակայն մարդկային կյանքով ապրելու էլ քչերն են ընդունակ: Չէ՞ որ կյանքն ինչպես անսահման մեծ է, էնպես էլ փոքր է անսահման»:Ապրել ժամանակի մեջ, ժամանակին համահուն

Հովաննես Թումանյան Երկերի ժողովածու,Երևան 1951թ.

Էս է, որ կա...Ճիշտ ես ասում, թասրդ բեր:
Էս էլ կերթա՝ հանց երազում, թասրդ բեր:
Կյանքն հոսում է տիեզերքում զընգալեն,
Մեկն ապրում է, մյուսն ըսպասում. թասրդ բեր:

Մի քանի քառյակներում Թումանյանը քննել է «ազահ» ու «անգոհ» մարդու ազահությունը, տառապանքի, հարստության, ոսկու հետևից հասնելու ձգտումը: Մարդը երբեք չի բավարարվում ունեցածով, Աստծու տված բարիքներց չի գոհանում, բայց չի կարող «ուրախ ու խաղաղ» անցնել «երկու օրվա էս ճամփեն»: Երկրային կյանքը շատ կարճ է երկնային կյանքի համեմատ:

Հեյ, ազահ մարդ, հեյ անգոհ մարդ, միտքրդ երկար, կյանքրդ կարճ,
Քանի քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ,
Ինչ են տարել նըրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ:

Աշխարհի չարն ու բարին տեսած, «ամենքի չափ տառապած» բանաստեղծը երազում էր ապրել անդորրության մեջ՝ շրջապատված «հաշտ ու խաղաղ» մարդկանցով: Սիրել է մարդուն այնպես, ինչպես կա,մինչև անգամ զայրույթի պահին նա երբեք չի չարացել, «սիրել, տարել ու ներել, վատը լավ է» տեսել միշտ: Փ. Վարդազարյանին գրել է. «Գիտես, ես էլ հետզհետե փիլիսոփայություն եմ սիրում և բանաստեղծության մեջ էլ այն, որ ոչ արտասուք ունի, ոչ հուզմունք, այլ մի վեհափառ խաղաղություն, մի օլիմպիական, վսեմ, արհամարհոտ թռիչք դեպի լավագույն աշխարհները և ավելի ջինջ ու մաքուր մթնոլորտները»: Թունանյանն այդպես է ապրել, այդպես է մտածել:

Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան 1945թ., հատոր 5, էջ 274

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է մ հոգին.
Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.
Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,
Վարը մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:

Ամփոփելով ասվածը՝ պետք է նշել , որ բանաստեղծը քառյակները, թեմատիկ շարքերի չի բաժանել, բայց դրանց բաժանունը կօգնի հասկանալ բանաստեղծական «խոհի ու հույզի» զարգացման ընթացքը. Էդ.Ջրբաշյան, Հ.Մախչանյան Հ.Թումանյան Ընտիր Երկեր «Սովետական գրող», Երևան 1990թ. Հատոր 2, էջ 508-512թթ.

1.քառյակներ, որոնց կենսական հիմքը այդ տարիներին բանաստեղծի կրած անձնական կորուստներն էին՝ հայրը, երկու եղբայրները, որդին ՝ Արտավազդը, գրչակից ընկեր Ղազարոս Աղայանը.

Ամեն մի սիրտ ցավով լրցվեց մեր դարում,
Ցավոտ սրրտով աշխարհ լրցվեց մեր դարում.
Ցավոտ աշխարհքն եկավ լրցվեց բովանդակ,
Իմ սիրտը բաց, իմ սիրտը մեծ մեր դարում:

2.քառյակներ, որոնց մեջ բանաստեղծը հիշում է մանկության անմոռանալի դեմքերն ու իրադարձությունները, ծննդավայրի անզուգական բնությունը՝ Լոռվա խորունկ ձորը , «գիժ» Դեբեդը, ժայռերը՝» հոնքերը կիտած, համառ ու անթարթ նայում են հանդարտ».

Կրլթացնում են, արտորում
Արտուտները սարերում,
Թռչում մանուկ հոգուս հետ,

Ճախրում, ճրխում եթերում:

3. քառյակներ, որոնք բանաստեղծի հոգևոր որոնումների և ճակատագրի ամփոփումն են.

Դու մի անհայտ Բանաստեղծ ես, չբտեսնված մինչ էսօր.

Առանց խոսքի երգ ես թափում հայացքներով լուսավոր:

Ես էլ ասենք, զարմանալի Ընթերցող եմ բախտավոր,

Որ կարդում եմ էդ երգերը էսքան հեշտ ու էսքան խոր:

4. քառյակներ, որոնց մեջ բանաստեղծը զննում է մարդու պատմական ճակատագիրը, անհատի և հասարակության փոխհարաբերության հարցերը.

Ազատ օրը, ազատ սերը, ամեն բարիք իր ձեռքին,

Տանջում, տանջում , որոնում է ու դրժբախտ է նա կրրկին.

Էյ անխելք մարդ , երբ տի թողնես ապրողն ապրի սրրտալի,

Երբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի:

5.քառյակներ, որոնց մեջ բանաստեղծը քննում է մարդու և բնության փոխհարաբերությունը.

Լույսը լուսին Քո ժպիտն է իմ երեսին ճառագում,

Երբ , ախ, արդեն անբույժ զարկված, դեպի մահն եմ ես հակվում.

Էսպես էն վառ արեգակի շողերի տակ կենսածոր

Կայծակնահար կաղնին ոտքի չորանում է օրեցօր:

6. քառյակներ, որոնց մեջ բանաստեղծը բանաստեղծը մտորում է տիեզերքի խոհերի շուրջ.

Աստեղային երազների աշխարհքներում լուսակաթ,

Մեծ խոհերի խոյանքների հեռուներում անարատ,

Անհիշելի վերհուշերի մըշուշներում նրրբաղոտ՝

Երբեմն, ասես, զգում եմ, թե ես կրհասնեմ Նրրա մոտ:

Թումանյանը այստես է արժևորել քառյակը. «Քառյակը պոեզիայի մինիատյուրն է, նուրբ ճաշակի բան...իմաստություն, վեհություն...քառյակը գոհար է և անպայման հղկված պետք է լինի»: Թումանյանի քառյակները «հայ քնարերգության մարգարիտներն են» և դասվում են հայ բազմադարյան խոսքարվեստի լավագույն նվաճումների շարքը: Մեծ հայն ու հայրենասեր, բանաստեղծը իրավունք ուներ իր մասին գրել, որովհետև նա սերել էր իր ժողովրդից, հազար թելերով կապված էր նրա հետ.

Իմ կընունքին երկինքը ժան, արևը՝ ջահ սրբազան,
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան,
Սարը եղավ կընքահայրը, ցողը՝ մյուռոն կենսավետ,
Ու կընքողս Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

Համագործակցային ռուսուցումը իրականացվում է համագուծակցային դասի միջոցով: Սա մի գործընթաց է, որը հիմնականում կապված է տրամաբանորեն իրար հաջորդող վարժություններից: Այդ ընթացքում սովորողները սովորում են և սովորեցնում, ձեռք են բերում նոր հմտություններ ու կարողություններ: Համագործակցային ուսուցման կարևոր միջոց է խմբային աշխատանքը: Խմբի յուրաքանչյուր սովորող պետք է գիտակցի, որ իրենից է նաև կախված խմբի հաջողությունը, քանի ու դասի ավարտին կատարվելու է ինքնագնահատում, խմբի յորաքանչյուր անդամ գնահատվում է նաև խմբի կողմից: Դասարանը բաժանում է վեց խմբի, յուրաքանչյուր խմբում երեքից ոչ պակաս սովորող: Յուրաքանչյուր առաջադրանքից հետո խումբը ներկայացնելու է իր աշխատանքը:

- **Ասմունքել նախընտրած քառյակները՝ դասագրքից կամ համացանցից**
- **շարունակել քառյակը.**
- **Քանի ձեռքից եմ վառվել.....**
- **Ինչքան ցավ եմ տեսել ես.....**
- **Բերանն արնոտ մարդակերը էն անբան.....**
- **Ամեն անգամ քո տվածց երբ մի բան ես Դու տանում.....**
- **Երազումըս մի մաքի.....**

3.Ըստ հերթականության՝ գասավորել քառյակի տողերը.

1.

Ա. Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,

Բ.Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ինչ կա որ,

Գ.Ես միշտ հոգի տիեզերքի մեծ հոգու հետ, ինչ կա որ,

Դ.Ես եղել եմ, կամ, կըլինեմ հար ու հավետ, ինչ կա որ:

2.

Ա. Քարշ եմ գալի ես տկար,

Բ.Իմ սրտի հետ խելագար,

Գ.Անհավասար կռվի մեջ

Դ.Նա մի առյուծ, ես մի գառ:

3.

Ա. Երազեցի շարունակ

Բ.Ու մնացի միշտ մենակ,

Գ.Իմ կյանքի մեջ ես մանկուց,

Դ.Պատրանքի մեջ՝ ես մանկուց:

4. Որ խումբը ավելի շուտ կգուշակի բաց թողնված բառերը.

Ա. Արյունալի աղետներով, ...ահարկու,

Արևմուտքի ստրուկները մեքենայի և ոսկու՝

Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներամ,

Դեպ Արևելքն աստվածային..... իմ հոգու:

Բ. Ո՞վ է .....անում, ո՞վ,

Հեռվից անթիվ ձեռքերով,

-Ջան, հայրենի.....,

Դուք եք կանչում ինձ ձեր քով:

5.Ընդգծված բառերը փոխարինել հոմանիշներով այնպես, որ միտքը չաղավաղվի.

Բարձր է հնոց **աշխարհն** Հայոց ու Մասիսը երկնադետ,

Իմ խոր հոգիր էն **բարձունքին** խոսք է բացել Նրրա հետ,

Ամհաս բանից ,ըսկզբանից, երբ չրկան էլ դեռ չրկար,

Մինչև **վախճանն** անվախճանի քընընում է **դարեդար:**

6. Յուրաքանչյուր խումբ նկարագարդի իր նախընտրած քառյակը:

7.Համացանցից միացնել Ս.Յուղբաշյանի տեսահոլովակը, ձայնը անջատել,սովորողները պետք է գուշակեն , թե ո՞ր քառյակին է համապատասխանում տվյալ բնանկարին: Այնուհետև միացնել ձայնը: Հաճախ ճիշտ են գուշակում, կարող է նաև իրենց տարբերակը առաջարկել:

8. Խմբերին բաժանել քառյակների թեմաները, որպեսզի համացանցից ընտրեն համապատասխան թեմայով քառյակներ/առնվազն երկու քառյակ:

Ավարտին խմբերին բաժանել ինքնագնահատման թերթիկներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կերտել հիանալի արձան և շնչավորել այն՝ լավ է. Բայց զարգացնել մատաղ խելքը, յուրովի կերտել պատանու հոգին և նրան ներշնչել ճշմարտության զգացումը՝ էլ ավելի լավ է: Վիկտոր Հյուգո

Հետազոտական աշխատանքից ելնելով՝կարելի է ասել, որ նոր տեխնոլոգիաների և համացանցի օգտագործումը ուսման գործընթացում բարելավում և ավելը արդյունավետ է դարձնում ուսումնական նյութի որոնումը և յուրացումը: ՏՀՏ-ը խթանում են սովորողի ճանաչողական հետաքրքրությունը, բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Նոր տեխնոլոգիաները հեշտացնում են սովորողների կողմից թեմայի յուրացումը, բարձրացնում են նրանց առաջադիմությունը:

Ուսուցման գործընթացում սովորողներին ՏՀՏ- ին հաղորդակից դարձնելը, դրանցով աշխատելը ապահովում է տեղեկատվական լայն հասանելիություն:

21–րդ դարում խիստ անհրաժեշտ է գիտելիքների և հմտությունների, մասնավորապես՝ստեղծագործական, վերլուծական, համակարգված, քննադատական մտածողության, մեդիագրագիտության,ինքնուրույնսովորելու, հետազոտական աշխատանքներ կատարելու, համագործակցային աշխատանքի և այլ հմտությունների զարգացումը: Անհրաժեշտ է ստողծել հայալեզու էլեկտրոնային հարթակներ, որոնք կկիրառվեն ուսումնական գործընթացում: Համացանցը ապահովում է հետադարձ կապ, որը դրսևորվում է ինչպես ուսումնական նյութի մատուցման գործընթացի կազմակերպմամբ, այնպես էլ ուսուցչի հետ հաղորդակցմամբ, որն իրականացվում է էլեկտրոնայն փոստի, տեսակոնֆերանսի մրջոցով: Մուլտիմեդիայի հիման վրա ստեղծված էլեկրական ուսուցման համակարգերը առավել արդյունավետ միջոցներ են , քանի որ կենտրոնացնում են սովորողի

ուշադրությունը, հնարավորություն է տալիս սովորողին ինքնահաստատվել. ավելի լավ է մեկ աեգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել:ՏՀՏ-ի միջոցով պլանավորել ուսումնադաստիարակչական գործընթացը, ստեղծել առարկայական թվային նյութեր: Դրանք ունեն ևս մեկ առավելություն. Ինտերակտիվ են, ուսուցման ամբողջ գուծընթացում ապահովում են երկխոսություն՝ ուսուցիչ-սովորող, սովորող- սովորող: ՏՀՏ-ն ապահովում է որակյալ և հավասար պայմաններ բոլոր ՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների, ազգային փոքրամասնությունների, սահմանամերձ, մեկուսացված բնակավայրերի սովորողների համար:

ՕԳԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հ.Թումանյան. Ընտիր երկեր «Սովետական գրող» Երևան 1990թ. Հատոր

2.Հովհաննես Թումանյան երկերի լիակատար ժողովածու, Երևան 1988թ. Հատոր 2

3.Էդ.Ջրբաշյան Հ.ՆՄախչանյան «Լույս» ՀՐ Երևան 1980թ.

4.Կարլեն Դանիելյան «Գրականության պատմության լույսը» Երևան «Սովետական գրող» 1989թ.